

ձեռնարկը թշնամիին՝ որ թնդանթ իսկ կը բերէ, բայց ուսմբերը չեն գորեր
 քանզի այդ գիւնդէն բնական ամբողջը: Քարայրին մէջ կուուող ոյժերը կը
 գարէր Մանուկ Քէշիշեան (որուն պիտի հանդիպինք Ձէփնիի մէջ): Քաջարի
 անտիլցիք շարաթներ վերջ միայն անձնատուր կ'ըլլան՝ ջուրի շղոյթեան
 պատճառաւ եւ ձեռնածանութեամբ կը կուտորուին կատղած խուժանէն: Ե.
 Քարահրաբի զիւցանական կուրին մանրանկարն էր Տէնտիլի ժողովուր-
 գինը: Մէջերնուն 4 հոգի կ'աջողին պաշարման շղթան կարել եւ երթալ միա-
 նայ Պողոյեանի Չաք գիւղի հերոս մարտիկներուն՝ Ազ-Տաղ: Ահաւասիկ ա-
 տանց անունները: Սեղբաք Եատոհանեան, Արթին Սաչատուրեան, Տօնիկ Պօ-
 շամպայի Գապա-ձէվիզ գիւղի կուուողներուն խառնուած):

9. Ձէփնի, Պուրհանէն 1 ժամ հեռու, 200 տուն: Եկեղեցին Ս. Փրկիչ՝
 ուր կը պաշտօնաւարէր

Վահան Քահանայ, իր հօտին հետ նահատակ:
 Ձէփնիի երեւելիներէն էր Մանուկ Քէշիշեան, Սանոյ կուրներուն ալ
 մասնակցող անկուն գործիչ մը, որ Տէնտիլի քարայրը կ'ապաստանի եւ
 կուուող տղերքը կը վարէ: Եղբայրը Մելիքեանի, Չաթ գիւղի հերոսամարտին
 խառնուած, թէեւ կ'աջողի զիշերանց ազատել «հարկմ» տարուած իր կողա-
 կիցը, բայց 2 ամիս վերջ կ'սպաննուի անոր հետ: Ձէփնիի յայտնի գոհերէն
 յիշենք՝ Գալուստ Այվաղեան, Առաքել Ձէքոյեան, Առաքել Փանոսեան եւ
 Մարկոս Քէշիշեան (վերջին երկուքը բէս): Վերապրող եւ Անդրանիկի խում-
 բին մէջ ծառայողներ՝ Միքայէլ Ձէքեան, Միհրան Մատիկեան, Գալուստ
 Կէշիշեան, Մարտիրոս եւ Արթին Պաթմանեան, Կիւլպէնիկ Սէրվէրեան, Վար-
 դան Տէլի-Գալուստեան (այժմ Պոլիս):

10. Ալա-Քիլիսէ, 40 տուն: Եկեղեցին Ս. Յակոբ՝ ուր կը պաշտօնա-
 վարէր

- Սազր Քահանայ Գարամանուկեան, նահատակ:
- 11. Թէմէնիւք, 30 տուն: Եկեղեցին Ս. Գէորգ:
- 12. Պալա-Էօզիւ, 4 տուն:
- 13. Փաշագեղ, 53 տուն: Եկեղեցին Ս. Գէորգ:
- 14. Բարբին, 109 տուն: Եկեղեցին Ս. Աստուածածին:
- 15. Գուրալը-Գայա, 41 տուն: Եկեղեցին Ս. Փրկիչ:
- 16. Ղանրարօղ, 73 տուն: Եկեղեցին Ս. Թորոս:
- 17. Ղազու-Մաղարա, 113 տուն: Եկեղեցին Ս. Յակոբ:



ԳԱՎԱԳ գիւղախումբի 35 հաս թուրք, Գրգրլուաշ եւ Սիւննի գիւղերէն
 Մուրալ միայն ունէր 35 տուն Հայութիւն, Ս. Աստուածածին եկեղեցիով:
 ԵՒՒԼԻՃԷ գիւղախումբն ունի 38 հաս ամբողջովին Գրգրլուաշ գիւղեր՝
 տանց Հայու:
 ԱՂԱՃԱԿ-ԽԱՆ, բերդաղիւզ, դարձեալ ճնահիչ Սերաստիոյ կուսակա-

յութեան մէջ, 19 հաս թուրք եւ Գրգրլուաշ գիւղերով՝ որոնցմէ Ազլէ-Գալէն
 միայն ունէր 10 տուն Հայութիւն, Ս. Սարգիս եկեղեցիով:

ՏԷԼԻԻՓ-ԹԱՇ գիւղախումբի 30 հաս թուրք եւ Ձէքեղ գիւղերէն Մա-
 կարա ունէր 100 տուն Հայութիւն, Եկեղեցին Ս. Աստուածածին, Նար-Հի-
 սար կամ Պօզլու-Պուճագ՝ 70 տուն, Եկեղեցին Ս. Թորոս, Մանգրլիք՝ 220
 տուն (2000 հոգի), Եկեղեցին Ս. Թորոս: Իսկ Միհր-Գուլագ անհայ գիւղն ալ
 կար թափուր մենաստան մը:

ԿԻՒՐԻՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ

Թօթմա-Սուր Եղերք՝ յաճառաչահ քաղաք, Կիլիկիոյ առաջնորդու-
 թեան ներքեւ, Հայ բնակչութիւնն էր 1712 տուն (6920 հոգին Լուստուրչա-
 կան, 380-ը Կաթուրիկ, 600-ը Բողոքական եւ 2500-ը պանդախտ): Հայնոց-
 ներք՝ Չախ-Չօր, Սաս-Պաղ, Ղարա-Թէփէ եւ Շուղուլ, իւրաքանչիւրն իր
 դպրոցով ու ժամով: Ատոնցմէ առաջինը միայն ազգատիկ թող բլլալուն՝
 Պոլսոյ «Աղղանուէր»ը բացած էր կրթարան մը, որուն պոլսեցի տեսչուհին
 Օր. Մարի Տէրտէրեան հրաշքով վերապրող մըն է (որմէ քողեցինք մեր տե-
 ղեկութիւնները): Երկուսուսուցչախումբէն մեծ մասը փնայցած է տարագ-
 րութեան մէջ, ուրիշներ ալ քաղքէն դուրս հանուելով՝ սշխարի պէս մոր-
 թըւած: Մանօթ ազգայիններ բնաւ մէջ կը շարժարուին եւ իրենցմէ 3 հոգին
 Սերաստիա տարուելով կախաղան կը բարձրանան: Տարեց այրերու թափօրը
 կը կուտորուի ճամբան բահի ու բիրի հարուածներով, իսկ Հայուհիներէ ա-
 նոնք որ կողակից էին կուսակցականաց՝ գլխիօյալը կախուելով կը ձողկուին,
 մինչ ձեռք քաշող Քեամիլ Հայրենաշունչ Հայկական երգ մը կը մուտար դժո-
 խային քրքիջով: Տեղահանութիւնը կը տեւէ ամիսներ, Այնթապի ճամբով
 գէպի Տէր Չօր, անվերջ կարուաններ կ'ինքու եւ մանկանց՝ որոնք կը ղեզ-
 չրէին սքսորի ճամբաներուն վրայ, լիկուելով եւ դանկրտուելով հանդրուանէ
 հանդրուան: Կիւրիւնէն մեկնող հսկայ կարուան մը, միամտեայ զժնդակ ուղե-
 տորութեան մը վերջ, կը հասնի Մարաշէն 12 ժամ հեռու՝ Այրան-Փուճար եւ
 Գրգրլ-Կէշիս, ամբողջէն 2800 կին ու տղայ մնացած, որոնք հոն կը կողոպ-
 տուին, շատեր ալ կ'սպաննուին սաուարաթիւ հրոսախումբի մը կողմէ, ա-
 տանց հաշուելու Այնթապ հասնելուն բռնարարուողները՝ քաղաքացի թուր-
 բերէ: Տխրահոշակներ. — Գայլագամ Ձէրփէղ Եասպ, ժամատարմա Գօման-
 տանի Քեամիլ, Ավուստուիս գատէ Մէհմէտ եւայլն: Շուղուլ թաղի մէջ հրա-
 ցանադարկ կ'ըլլայ Հայ գօլէճականներու ծուարած խումբ մը:

Եկեղեցիները Ս. Փրկիչ, Ս. Յակոբ եւ Ս. Գէորգ՝ ուր պաշտօնաւարող
 բազմաթիւ եկեղեցականներէն յիշենք

Յեսու Քահանայ Վարդապետեան. — 60 տարու, բնիկ, աշխարհական
 անուամբ Սարգիս, առեւօք ուսուցիչ ծննդավայրն ու Հայկպ, դրարարա-
 գետ: Պետրոս Եպիսկոպոս թահմիզեանէ քահանայ ձեռնադրուելով՝ 22
 տարի անընդհատ պաշտօնաւարած է Ս. Փրկիչ եկեղեցին, եւ 96-ի ջորդերու

վազորագայինն՝ Հիմնած Հայրենակից Գ. Թօփալեանի նպաստով սրբանոց մը, զոր վարած է ցվերջ: Վկայակից Խորէն եպիսկոպոսի եւ Պատուելի Մուշակեանի:

Սահակ Քահանայ Եազուպեան. — 60 տարու, զէյթունցի իշխանապուն: Կը պաշտօնավարէր Մայր Եկեղեցին:

Ճեան Սրբազանէ: Կը պաշտօնավարէր Մայր Եկեղեցին: Աղբէ Քահանայ Մանուկեան. — Օծակից Տ. Իգնատիոսի:

Ս. Փրկիչ եւ Մայր Եկեղեցի (քաղաքին կեդրոնը) 96-ի կոտորածէն միակ զերծ մնացողներն են, ուր սպաստանած է ամբողջ Հայութիւնը: Էօրէն եւ Շուղուլ թաղերն ալ ունէին իրենց սրբավայրերն ու երէցները, նոյնպէս փճացած:

Թեմիս բարեջան առաջնորդն էր Խորէն եպիսկոպոս Գիմախեան. — Մնած է 1864-ին, բնիկ, վարդապետ ձեռնադրուած Բէքմէզեան Սրբազանէ 1892-ին: Միարան Կիլիկիոյ, որուն այլևայլ քաղաքները, մանաւանդ Եօզղատ՝ երկար ատեն պաշտօն վարած եւ հուսկ ուրեմն ստանձնած իր ծննդավայրի հովուութիւնը: Իր յառաջացած տարիքին ալ շինարարութիւն, կառք կը նստեցնեն զինք Տ. Յեսուի եւ Մուշակեան Պատուելիի հետ: Հայ տուներու պատուհաններէ անոնց երթը կը դիտուի անձկանօք ու լալազին: Եւ ժամ մը շանցած՝ նոյն կառքը կը դառնայ քաղաք, արիւնտ ու դատարկացած...:

Աւետարանական Հայոց հովիւներն էին Պատուելի Պետրոս Մուղապեան. — Իբր քարոզիչ եւ ուսուցիչ՝ պաշտօնավարած Սերաստիա, Կիւրին, Էնտիրէս, Շապին Գարահիսար եւ Տիվրիկ: Վկայակից Խորէն եպիսկոպոսի եւ Տ. Յեսուի:

Պատուելի Արտաշէս Քէօշկէրեան. — Տարէնտէի Աշոտի զիւղէն, 36 տարու, ուսումը ստացած Սերաստիա եւ Այնթապի Կեդրոնական Գօլէճը: Ժողովուրդին հետ քշուած եւ ճամբան կորած:

Իսկ Հայ Հոռմէականք 50 տուն էին ճիշդ, մէկ եկեղեցիով ուր կը պաշտօնավարէր

Հ. Գրիգոր Վարդապետ Փէիլիվանեան. — Աղէտի օրերուն կը գտնուէր Սերաստիա, ուրիչ տարադրուած է Հալէպ եւ ողջ մնացած (Հիմա Ատանա): Կիւրինի շուրջ 6 զիւղեր զուտ թրքարեակ ըլլալուն՝ զանց կ'ընենք յիշել: Հայարնականներն ահաւասիկ.

Եղէն, 5 տուն:

Գավազ, 20 տուն:

Ղարասար (Գարա Հիսար), 72 տուն, եկեղեցին Ս. Սարգիս:

Երեքին ալ ժողովուրդն իր երէցով տարագրութեան մէջ բնաջինջ էր զած է:

ԳԱՐԱՏՕՐԱԳ զիւղախումբի 12 հատ թուրք եւլն. զիւղերէն Գարավէրէն միայն ունէր 19 տուն Հայութիւն, Լուսաւորչական եւ Բողբաջական խառն:

ԿէօՊէՔ Վէրէն զիւղախումբի 30 հատ թուրք եւլն. զիւղերէն Հեաեւեալ երկուքը միայն Հայարնակ էին.

Քիւրքնի, 7 տուն:

Քեափիր-Վէրէն, 2 տուն, անժամ եւ անհովիւ:

ՏԱՐԷՆՏԷ (ծննդավայր բանասէր-ուսուցիչ Մկրտիչ Թուրեանի որ նոյնպէս զոհ զնաց Մեծ Եղեռնին): Հայ բնակչութիւն՝ 386 տուն (1900 անձ), 1 եկեղեցիով, ուր կը պաշտօնավարէին

Ղեւոնդ Քահանայ (40 տարու) եւ Յովհաննէս Քահանայ (35 տարու), որոնք Սերաստիոյ բանաէն հանուելով՝ նահատակուած են «Գարտաշար» լ'ուր:

Տարէնտէի 45 հատ թուրք եւ Քիւրտ զիւղերէն (մէջն ըլլալով կարմիր Գար եւ Այվալու «նահիէ»ները),

Աշոտի միայն ունէր 180 տուն Հայութիւն (950 հոգի տեղացի եւ 150 սլանդուխտ), 1 եկեղեցիով եւ «Ս. Յակոբ» հնաւուրց վանքով: Աշոտի, մեծամասնութեամբ թուրք, գեղեցկազիր զիւղաքաղաք մըն է, հաստատուած 2 բարձրաբերձ ժայռերու տակ: Հայ արիւնը հո'դ ալ հոսեցաւ մինչեւ վերջին կաթիլ:

Տիվրիկ. — Տաւրոսի եւ Անդիտաւրոսի լեռանց մէջ, անտառուտ զիրքով, շրջանակաձեւ բարձր սարերով պատասպար հովիտի մը մէկ զին կառուցուած զիւղաքաղաքիս Հայ բնակչութիւնն էր 600 տուն, որ նոյնպէս բախտակից եղաւ մերձակայ վայրերու Հայութեան, անլուր խժոժութեանց նշաւակ դառնալով: Նախ տեղոյն երեւելիները կը կոտորուին, յետոյ տեղահանութիւն, եւ Տիվրիկէն կէս ժամ հեռու Բալանկայի դաշտը կողոպուտ ու ջարդ Քիւրտերու կողմէ՝ Թուղուտի մօտերը:

Քաղաքին զիրքը երկուքի բաժնուած է ձորակով մը: Իր լեռներն են Տէլի-Տաղ, Ագ-Տաղ, Զընըսկու-Պէլ, Տուժուրճա, Եամա, Տէմիրլի, Սարը-Զիչէք, Կէօլ-Տաղ եւայլն:

Տիվրիկի մէջ կան Ս. Աստուածամայր, Ս. Գէորգ, Խնդրակատար Ս. Ասրգիս եկեղեցիներու աւերակներ: Բացի «Լուսաւորիչ» վանքէն, եկեղեցիներն էին Ս. Երրորդութիւն եւ Ս. Առաքելական (երկուքն ալ «Բերդի Տակ» թաղը կառուցուած), ուր կը պաշտօնավարէին

Գրիգոր Ա. Քահանայ Զարդարեան. — 45 տարու, առաջնորդական փոխանորդ, բնիկ: Բանտ նետուելով՝ ենթարկուած է զարհուրելի տանջանաց (եղունգները քաշել, ներբաններուն պայտ դամել եւ մորթազերծել), մինչեւ իր շարակտուտ վախճանը՝ բանտին գետիններուն վրայ տախտապար: Վկայակից է իրեն Մեղքոն Կէօղէլեան, միեւնոյն տանջանքներով, ձեռամբ ջարդարար Քէօր Ատիլի: Տիվրիկի այս կերպ նահատակ ուսուցիչներէն յիշենք Արշաւիր Սուքիասեանն ու Յակոբ Գըլըճեանը:

Սերոբէ Քահանայ Բոնիկեան. — 35 տարու, բնիկ, Կեսարիոյ Ս. Կարապետի ժառանգաւորացէն ընթացաւարտ, զոր տեղացի թուրքեր սովոր էին «ժէօն քէշիչ» կոչել հեղնօրէն: Աղէտի օրերուն՝ լեղապատառ լեռ փախած ատեն կ'սպաննուի խուժանին կողմէ: